

9 - ԸՆԴՀԱՆՈՒՐ

Տևողությունը՝ 90 րոպե:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ո՞ր դեպքում է հնարավոր վարել արդյունավետ արտաքին քաղաքականություն:

- 1. Ճկուն քաղաքական դաշտ ունենալու դեպքում
- 2. Գրագետ քաղաքական գործիչների առկայության դեպքում
- 3. Միայն հզոր բանակի առկայության դեպքում
- 4. Շատ զորք ունենալու դեպքում

2. Ովքե՞ր են եղել ՀՀ Զինանշանի հեղինակները:

- 1. Ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Մարտիրոս Մարյանը
- 2. Ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոչոյանը
- 3. Ճարտարապետ Գագիկ Աբրահամյանը և նկարիչ Հակոբ Կոչոյանը
- 4. Ճարտարապետ Թորոս Թորոմանյանը և նկարիչ Հակոբ Կոչոյանը

3. Համապատասխանեցնել իրադարձությունները տարեթվերին:

- |                           |            |
|---------------------------|------------|
| 1. Ներսեհապատի ճակատամարտ | ա. 62 թ.   |
| 2. Հռանդեայի ճակատամարտ   | բ. 1727 թ. |
| 3. Հալիձորի ճակատամարտ    | գ. 371 թ.  |
| 4. Ձիթավի ճակատամարտ      | դ. 482 թ.  |

- 1. 1 - դ, 2 - ա, 3 - բ, 4 - գ
- 2. 1 - ա, 2 - դ, 3 - բ, 4 - գ
- 3. 1 - դ, 2 - բ, 3 - ա, 4 - գ
- 4. 1 - դ, 2 - գ, 3 - բ, 4 - ա

4. Ո՞րն էր Տիգրան Մեծի կիրառած մարտավարական հնարքը՝ արածանու ճակատամարտում:

- 1. Հուժկու նետաձգային հարվածներ ծանրազեն հեծելազորի հեծյալների միջոցով
- 2. Հուժկու նետաձգային հարվածներ հետևակի միջոցով
- 3. Հուժկու նետաձգային հարվածներ թեթևազեն հեծելազորի միջոցով
- 4. Հուժկու նետաձգային հարվածներ ծանրազեն հեծելազորի և հետևակի միջոցով

5. Կիլիկյան Հայաստանի ո՞ր թագավորի օրոք եգիպտական մամլուքներն ու Բկոնիայի սուլթանության զորքերը միաժամանակ հարձակվեցին և պարտություն կրեցին:

- 1. Լևոն 2-րդ թագավորի
- 2. Հեթում 1-ին թագավորի
- 3. Ռուբեն իշխանի
- 4. Օշին թագավորի

6. Կիլիկյան Հայաստանի զինված ուժերում ո՞ր երկրի «Զինվորական օրենսգիրքն» է կիրառվել:

- |                 |                          |
|-----------------|--------------------------|
| 1. Բյուզանդիայի | 2. Հռոմեական կայսրության |
| 3. Եգիպտոսի     | 4. Պարսկաստանի           |

7. Արշակունյաց արքայատան օրոք ի՞նչպես է կոչվել արքայական գունդը:

- |                      |                        |
|----------------------|------------------------|
| 1. «Մատյան գունդ»    | 2. «Թագավորական գունդ» |
| 3. «Արքայական գունդ» | 4. «Առաջնորդաց գունդ»  |

8. Ու՞մն են պատկանում հետևյալ խոսքերը. «Հայերը Ղարաքիլիսայի տակ ցույց տվեցին, որ կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները»:

1. մարշալ Վեհիբին
2. գեներալ Պասկևիչին
3. գնդապետ Պերեկրեստովին
4. պորուչիկ Նժդեհին

9. Նշվածներից ո՞րն է եղել միջնադրայան Հայաստանում բարձրագույն զինվորական կոչում

1. Փարաջախտը
2. Բարբաջախտը
3. Մարաջախտը
4. Մարմաջախտը

10. Ե՞րբ սկսեց անկում ապրել 1720-ական թվականներին սկիզբ առած Սյունիքի ազատագրական շարժումը:

1. Դավիթ-Բեկի մահից հետո:
2. Թորոս գորավարի մահից հետո
3. Մխիթար Սպարապետի սպանությունից հետո:
4. Հալիձորի ճակատամարտից հետո:

11. Ի՞նչ է մոտոհրաձգային ջոկի մարտակարգը:

1. Զինվորների դասավորություն մարտ վարելու համար
2. Զինվորականների դասավորություն մարտ վարելու համար
3. Զինվորների դասավորություն պատերազմ վարելու համար
4. Զինվորների դասավորություն հատուկ ռազմական գործողություններ կատարելու համար

12. Զինվորական երդման տեքստը հաստատվել է ՀՀ Գերագույն խորհրդում՝

1. 1991 թ. դեկտեմբերի 27-ին
2. 1992 թ. հունվարի 28-ին
3. 1991 թ. փետրվարի 23-ին
4. 1991 թ. սեպտեմբերի 21-ին

13. Ի՞նչ կարծիք է հայտնել հռոմեացի հանրաճանաչ հռետոր Կիկերոնը պատերազմների մասին:

1. «Երբ զրնգում են զենքերը, սկսում են գործել պատերազմների օրենքները»
2. «Երբ գործում են օրենքները, լռում են զենքերը»
3. «Երբ զրնգում են զենքերը, դադարում են մարդկային իրավունքները»
4. «Երբ զրնգում են զենքերը, օրենքները լռում են»

14. Համապատասխանեցնել անվանումները մարտավարական պայմանական նշաններին:



ա. Հետևակի մարտական մեքենա



բ. Զրահավոխադրիչ



գ. Ավտոմեքենա







դ. Տանկ



1. 1 - դ, 2 - գ, 3 - բ, 4 - ա
2. 1 - ա, 2 - դ, 3 - բ, 4 - գ
3. 1 - գ, 2 - բ, 3 - ա, 4 - դ
4. 1 - դ, 2 - ա, 3 - բ, 4 - գ

15. Համապատասխանեցնել անվանումները պայմանական նշաներին:

1. 
2. 
3. 
4. 

ա. Մարգագետին

բ. Խաղողի այգիներ

գ. Մրգատու այգիներ

դ. Խառը անտառ

1. 1 - դ, 2 - ա, 3 - բ, 4 - գ
2. 1 - ա, 2 - բ, 3 - գ, 4 - դ
3. 1 - գ, 2 - բ, 3 - ա, 4 - դ
4. 1 - դ, 2 - ա, 3 - գ, 4 - բ

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Մինչև քանի՞ մետր խորություն ունի դիտարկման համար ընտրված մոտակա տարածքը, որտեղ տեսանելի են մանր առարկաները, թիրախներն ու օբյեկտները:

17. Ճառագայթահարման դեպքում մինչև քանի՞ Ռ-ը չի հանգեցնում աշխատունակության կորստին:

18. Միջազգային ռեզիստրի մասնագետները պոտենցիալ թունավոր նյութերի ամբողջ քանակությունից որքա՞ն առավել զանգվածային և առավել թունավոր նյութեր են առանձնացրել:

19. Քանի՞ մ/վրկ է ԿԱ-74 ավտոմատի գնդակի սկզբնական արագությունը:

20. Վերակենդանացման համար կրծքային քանի՞ սեղմում է անհրաժեշտ կատարել: